ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ 2020-2021 ՈՒՍ.ՏԱՐՎԱ
ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020-2021 ուստարում համալսարանի ուսումնական մասն իրականացրել է ԱԲՀ-ում գործող կրթական ծրագրերին ու պլաններին համապատասխան գործընթացներ՝ առկա և հեռավար ձևով:

- Ուսումնական գործընթացը լիարժեք իրականացնելու համար ժամանակին պատրաստվել են ուսանողների ցուցակները, ուսումնական մատյանները, դասաբաշխման, ամբիոնի ուսումնական աշխատանքների ծավալը, օրացույցային-թեմատիկ պլանների, խորհրդատվությունների մատյանի և այլ ձևաթղթերը:
- Հիմք ընդունելով ՀՀ Պարետի «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների և կանոնների վերաբերյալ» 18.08.2020թ-ի N 253-Ն որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Համալսարանում ուսումնառողները միայն օտարերկրյա քաղաքացիներ են և ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության ժամանակ նրանց մեծ մասը մեկնել են և գտնվում են իրենց երկրներում, համալսարանում 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակը անխափան և արդյունավետ անցկացնելու նպատակով ուսումնական գործընթացը ս/թ սեպտեմբերի 1-ից ամբողջովին իրականացնել էր հեռավար: Քանի որ նախորդ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից սկսած ԱԲՀ-ում դասընթացները կազմակերպվել են հեռավար, ուստի այս տարի բոլոր ամբիոնները լիարժեք պատրաստ են ուսումնական տարին հեռավար անցկացնելու գործընթացին:

COVID-19 համավարակի հետ պայմանավորված 2020-2021 ուստարվա գարնանային կիսամյակը նույնպես անցկացվել է հեռավար:

ԱԲՀ-ի կլինիկական բազա հանդիսացող «Ս.Գրիգոր Լուսավորիչ »Բ/Կ-ն վերապրոֆիլավորվել էր և գործում էր որպես COVID-19 համավարակի

սպասարկող կլինիկա, դասացուցակը ժամային առումով հարմարացվել է այնտեղ աշխատող դասախոսների գերծանրաբեռնվածությանը:

- Հեռավար կատարվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից թույլտվություն ստացած ուսանողների գիտելիքների ստուգում «Կենսաբանություն» և «Անգլերեն» առարկաներից, ZOOM հարթակի միջոցով, որի արդյունքների հիման վրա ունեցել ենք 2020-2021 ուստարվա բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների 1-ին կուրս 83 ուսանող հետևյալ երկրներից՝ Հնդկաստանից, Իրանից, Մեծ Բրիտանիայից, Շվեդիայից, Հորդանանից, Իրաքից, Ռուսաստանից:

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ COVID-19 համավարակի հետ պայմանավորված 2020-2021 ուստարվա գարնանային կիսամյակը նույնպես անցկացվել է հեռավար, ուստի 2019-2020 ուստարվա II, III և IV կուրսերի ամառային հետաձգված ուսումնաարտադրական պրակտիկաները չանցած ուսանողների համար որոշվել է անցկացնել 2021-2022 ուստարվա աշնանային կիսամյակի ընթացքում՝ հերթապահությունների ձևով:

  Հեռավար ուսուցման ընթացքում մշտապես ամենատարբեր հարցերով ամենօրյա կապ է պահպանվել ուսանողների և դասախոսների հետ:

  Ամեն ամսվա ավարտին դասախոսները ներկայացրել են կատարողականներ դասերը վարելու մասին, տրամադրել են նաև վարած դասերի տեսանյութերը, սկրինշոտերը, որոնք պահպանվում են համալսարանում:

- Ավարտական ամփոփիչ ատեստավորումը 2020-21 ուսումնական տարում ևս անկացվել է հեռավար: ZOOM հարդակի միջոցով դեկանի, կուրսղեկների հետ միասին կազմակերպել ենք և անցկացրել խորհրդակցություն ավարտական կուրսերի ուսանողների հետ: Ուսանողներին մանրամասն ներկայացվել է ավարտական ամփոփիչ ատեստավորումների անցկացման ընթացքը, <<ԱԲՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումների անցկացման>> կարգը:

- Հաշվետու տարում բուհն ավարտել են՝
  - ✓ «Ստոմատոլոգիա» մասնագիտության անընդհատ և ինտեգիացված կրթական ծրագրով՝ __11__ շրջանավարտ:

- ✓ «Բուժական գործ» մասնագիտության անընդհատ և ինտեգիացված կրթական ծրագրով՝ __7__ շրջանավարտ:

- Կազմնակերպվել են շրջանավարտների դիպլոմների և նրանց հավելվածների տպագրման աշխատանքները և շրջանավարտների դիպլոմների բաշխման մատյանի վարումը: Սահմանված ժամկետներում դիպլոմները և նրանց հավելվածները հանձնվել են շրջանավարտներին:
- Տարվա կտրվածքով ամբիոնների ընդհանուր առաջադիմությունը կազմում __91__ , որը չի փոխվել է 2019-2020 ուսումնական տարվա համեմատ, իսկ որակական առաջադիմությունը աճել է __6_ %-ով: Ընդհանուր առաջադիմության բարձր տոկոսը գրանցվել է «Ստոմատոլոգիա» ամբիոնում, իսկ ցածրը՝ «Բնագիտական առարկաների» ամբիոնում:

Աղյուսակ 1

N	Ամբիոն	Աշնանային կիսամյակ		Գարնանային կիսամյակ		Տարեկան առաջ.	
		Ընդհ. առաջ.	Որակ. առաջ.	Ընդհ. առաջ.	Որակ. առաջ.	Ընդհ. առաջ.	Որակ. առաջ.
1	Հումանիտար առարկաների	95,9	57	91,7	64,6	94,1	57,4
2	Բնագիտական առարկաների	75.5	42.2	85.7	60,9	80.6	51.6
3	Բժշկակենսաբանական առարկաների	83,9	55,7	78,4	50,4	81,2	53,1
4	Սոցիալական բժշկության	97,15	75,15	96	80,6	96,8	77,85
5	Թերապևտիկ առարկաների	95,3	58,7	79,75	37,1	88,05	50,75
6	Վիրաբուժական առարկաների	99,1	82	99,4	82.1	95,2	77,7
7	Ստոմատոլոգիայի	98,19	73,7	98,8	77,4	97,79	75.5
8	Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության	98,24	57,8	93,1	58,7	93	54,25
ԸՆԴԱՄԵՆԸ		***93***	***62,78***	***81,48***	***64***	***91***	***69,5***

Կարգավորվել և վերահսկվել են համալսարանի ամբիոնների ուսումնական պարապմունքներն ու գործունեությունը:

2020-2021 ուսումնական տարում բոլոր 8 ամբիոնների ուսումնական աշխատանքների ծավալը կազմել է ____28.643___ ժամ, որը _____2.304____ ժամով պակաս է 2019-2020 ուս.տարվանից: Կազմակերպել և ստուգել ենք 2020-21

ուստարվա համալսարանի 8 ամբիոնների տարեկան դասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածությունների հաշվարկները՝

Ուսումնական ծանրաբեռնվածությունների կատարողականի ցուցանիշները

Հ/հ	Ամբիոն	Պլան	Կատարողական	Շեղում
1.	Հումանիտար առարկաների	2187	2056	-131
2.	Բնագիտական առարկաների	2968	2864	-104
3.	Բժշկակենսաբանական առարկաների	6132	5802	-330
4.	Թերապևտիկ առարկաների	3368	2553	-815
5.	Վիրաբուժական առարկաների	2605	2237	-368
6.	Սոցիալական բժշկության	1937	1844	-93
7.	Ստոմատոլոգիայի	2690	2126	-564
8.	Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության	1390	1362	-28
Ընդամենը		**23277**	**20844**	**-2433**

Ըստ ուսումնական պլանի նախատեսված դասախոսների ծանրաբեռնվածության ժամաքանակի շեղումները պայմանավորված են հետևյալ պատճառներով, որոնք նաև եղել են նախորդ տարում.

- տոնական և ոչ աշխատանքային օրերի առկայություն,
- խորհրդատվություններին հատկացված ոչ բոլոր ժամերի կատարում,
- COVID-19 համավարակի հետ կապված համալսարանի վարձակալած կլինիկական բազաների վերապրոֆիլավորման պատճառով կլինիկական առարկաների դասախոսների գերծանրաբեռնվածություն:
- COVID-19 համավարակի հետ կապված ուսումնական պրակտիկաների ժամերի չանցկացում:

➢ Կատարվել է հեռավար մասնակցություն ամբիոնների նիստերում, ռեկտորատի, գիտ. խորհրդի նիստերին:

2020-2021 ուս.տարում ուսումնական մասը մասնակցել է համալսարանի գիտխորհրդին կից որակի ապահովման հանձնաժողովի աշխատանքներին: Հաշվետու տարում

մասնակցություն է եղել համալսարանում գործող կարգերի և կանոնակարգերի վերանայմանն ու նոր փաստաթղթերի ստեղծմանը՝

- ✓ « ԱԲՀ ներքին կարգապահական» կանոններ,
- ✓ «Ակադեմիական շարժունության» կարգ,
- ✓ «Ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպման և անցկացման» կանոնակարգ,
- ✓ «Ուսանողների խրախուսման և ուսման վճարի մասնակի փոխհատուցման /զեղչերի/ տրամադրման» կանոնակարգ,
- ✓ «Հեռավար ուսուցում» մեթոդական ուղեցույց դասախոսների համար
- ✓ «Ուսանողի ուղեցույց»,
- ✓ «Պրակտիկայի թղթապանակ»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Համալրել ամբիոնները գիտական աստիճան ունեցող մասնագետներով, նաև կարևորել դասախոսների վերապատրաստման հարցը:
- Բարելավել համալսարանի ընդունելության պլանավորումը՝ անպայման ներգրավելով հայ դիմորդների:
- Համալրել համալսարանի գրադարանը անգլերեն գրականությամբ:

Ուսումնական մասի վարիչ՝ Ա.Սարգսյան